

Վերհանման զեկուլյց

Spotlight Report

urbanlab 

11 SUSTAINABLE CITIES
AND COMMUNITIES



Կախուն զարգացման նպատակ 11՝
այլընտրանքային քաղաքային գնահատում

Sustainable Development Goal 11:
Alternative Urban Assessment



Նախաձեռնող
Dekabristen e.V.



Initiated by
Dekabristen e.V.



Իրականացրեց
ուրբանլաբ



Implemented by
urbanlab

Չետագոտողներ
Սարհատ Պետրոսյան
Չեղինե Փիլոսյան

Research by
Sarhat Petrosyan
Heghine Pilosyan

Տարածական վերլուծություններ
Գագիկ Խաչատրյան

Spatial Analysis
Gagik Khachatryan

Չամակարգող
Լենա Մաթևոսյան
ուրբանլաբի տնօրեն

Coordinated by
Lena Matevosyan
urbanlab Director

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ	7
ՀԱՄԱՏԵՔՍ	13
ՄԱՏՁԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	27
ԱՆՎՏԱՆԳ և ԱՐԴԱՐ ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ	35
ՆԵՐԱՌԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ	47
ԺԱՌԱՆԳԵԼՈՎ ԺԱՌԱՆԳԱՃԸ	59
ՏՈԿՈՒՆ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ	67
ՄԱՔՈՒՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ	73
ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ	83
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ	91

Contents

PREFACE	8
CONTEXT	14
CONVENTIONAL HOUSING FOR ALL	28
SAFE AND FAIR MOBILITY	36
INCLUSIVE PLANNING	48
INHERITING INHERITANCE	60
RESILIENT LIVING	68
CLEAN ENVIRONMENT	74
LIVEABILITY	84
KEY MESSAGES	92

Նախաբան

ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակները միջազգայնորեն ճանաչված միակ փաստաթուղթն է, որում ամրագրված է մինչև 2030 թվականի համար նախատեսված ճանապարհային քարտեզը՝ բաղկացած 17 նպատակներից, որոնք սահմանում են ավելի լավ աշխարհի ստեղծելու մեր ընդհանուր «տնային աշխատանքը»:

Քաղաքները շրջակա միջավայրի համար ամենամեծ մարտահրավերներից մեկն են: Այսօր քաղաքներում արդյունաբերության, շենքերի ջեռուցման ու հովացման, ինչպես նաև լուսավորման համակարգերի գործառնությունները մոլորակի ռեսուրսների ամենամեծ սպառողներն են, և միևնույն ժամանակ՝ շրջակա միջավայրի աղտոտիչները: ԿՁԼ 17 նպատակներից 11-րդ նպատակը՝ քաղաքները ներառական, դիմակայուն, անվտանգ, և կայուն դարձնելն է: ուրբանլաբը, որպես քաղաքային անկախ հետազոտահեն կազմակերպություն, գերմանական Dekabristen կազակերպության աջակցությամբ՝ փորձել է ուսումնասիրել և արձանագրել, թե որտեղ է գտնվում Հայաստանը 2015-ից 2030-ի կես ճանապարհին՝ կոնկրետ նպատակներին հասնելու համար:

Հաշվի առնելով այս ոլորտում մեր երկարամյա փորձը, ինչպես նաև Հայաստանի կառավարության և տեղական իշխանությունների հետ ակտիվորեն համագործակցելու հնարավորությունը՝ մենք անակնկալի եկանք ցուցանիշների չափման համար հասանելի տվյալների բացակայությունից, որոնք կարող էին հիմք հանդիսանալ՝ արձանագրելու այս փուլում Հայաստանում տիրող իրավիճակը՝ կոնկրետ այս նպատակի վերաբերյալ:

Այսպիսով, անհրաժեշտ է արձանագրել, որ տվյալահեն քաղաքականությունը վճռորոշ նշանակություն ունի ցանկացած երկրի և քաղաքի

Preface

The 2030 Agenda is one of the only internationally accepted narratives that provides a roadmap to 2030 through 17 Sustainable Development Goals (SDGs) that define our common tasks for building a better world.

Cities are one of the biggest challenges for the environment. The way that industry works, the way that we move and the way that we heat-cool-illuminate our buildings are the biggest consumers of our planet's resources and, at the same time, the biggest polluters. SDG 11 aims to make cities inclusive, safe, resilient and sustainable. urbanlab, as an independent urban think-do-share lab, with the support of SDG LENS. Monitoring Sustainable Development in Eastern Europe & South Caucasus, has tried to study and inventory where Armenia is for this particular goal, at the half-way point between 2015 to 2030.



© urbanlab / Katharina Roters

With our long experience of working in the field, and also with the opportunity to work extensively with the Armenian government and local authorities, we were surprised by the lack of available data to measure the indicators that could show where Armenia stands in relation to this particular goal.

And again, we have to say that data-driven policy is

համար, հատկապես Հայաստանի նման երկրի, որն ամենից շատն է տուժել ավելի քան երեք տասնամյակ առաջ Խորհրդային Միության փլուզումից, և հատկապես երկու տարի առաջ՝ ավերիչ պատերազմից հետո: Հաշվի առնելով աշխարհաքաղաքական ծանր իրավիճակը՝ պետք է գիտակցենք, որ Մոլորակը չի կարող սպասել մեր առաջարկներին ու լուծումներին, հետևաբար կայուն և լավ ապագայի համար առողջ բանականության անհրաժեշտություն կա: Մեր հիմնական առաջարկը՝ երկարաժամկետ մտածողության արմատացումն է՝ կայուն զարգացմանն ուղղված այլ կերպ ասած՝ առաջ շարժվել փոքր քայլերով՝ դեպի մեծ նպատակներ՝ առանց որևէ մեկին հետ թողնելու...

Սարհատ Պետրոսյան

ճարտարապետ-քաղաքային պլանավորող,
 ուրբանլաբի հիմնադիր

crucial for any country and city, especially a country like Armenia, which suffered the most with the collapse of the Soviet Union more than three decades ago, and once more two years ago after a devastating war. Given the harsh geopolitical situation across the continent, the planet cannot wait for our solutions, but needs to establish common sense for a better future. Our main recommendation will be to start long-term thinking for sustainable development, taking small steps with great ambition, leaving no one behind...

Sarhat Petrosyan

Architect-Urban Planner, urbanlab Founder



Համատեքստ

Յետ-հազարամյակի զարգացման նպատակներ

2015 թվականի սեպտեմբերին Յայաստանը դարձավ «Կայուն զարգացման 2030 օրակարգ»-ի 193 ստորագրողներից մեկը: Հիմնվելով Հազարամյակի զարգացման նպատակների (ՅՁՆ) նախորդ գործընթացի վրա՝ երկրում գործում էին մի քանի մշտադիտարկման հաստատություններ: Կայուն զարգացման ազգային խորհուրդը (ԿՁԱԽ), որը 2002 թվականից իր կազմավորման պահից նախագահում էր վարչապետը, եղել է ՅՁՆ-ների ներքո իրականացվող կայուն զարգացման ծրագրերի շահառու: 2014 թվականին աշխարհի տասներկու ԿՁԱԽ-ներին ուղարկված՝ ՅՁՆ-ներից ԿՁՆ-ի անցման և վերջինիս խորհուրդների իրականացրած դերի վերաբերյալ հարցումներում¹ հայկական խորհրդի պատասխանները հիմնականում անդրադառնում էին քաղաքների և հանրային ավելի լայն իրազեկման անհրաժեշտությունը շեշտող ԿՁՆ-ներին:

2015 թվականի մարտին վարչապետը հրամանագրեց ստեղծել Կայուն զարգացման նպատակների ազգային խորհուրդ: Երկու տարի անց ձևավորվեց միջգերատեսչական խորհուրդ՝ 2030-ի օրակարգում ներառված թիրախների և ցուցանիշների ազգայնացման ուղղությամբ ջանքերը ղեկավարելու նպատակով: Նախկինում երկիրը զգալիորեն բարելավել էր մայրական և մանկական մահացության, կրթության հասանելիության և խմելու ջրի աղբյուրների հետ կապված ՅՁՆ² ցուցանիշները, և մասամբ հասել էր աղքատության կրճատման և շրջակա միջավայրի կայունության ապահովման իր նպատակներին:

Իրատեսորեն, մինչև 2020 թվականը ԿՁՆ-ների

Context

Post-Millennium Development Goals

In September 2015, Armenia became one of the 193 signatories of the 2030 Agenda for Sustainable Development. Building on the previous process of Millennium Development Goals (MDGs), the country had several monitoring institutions in place. The National Council for Sustainable Development (NCSD), chaired by the Prime Minister since its formation in 2002, was the custodian of the sustainable development programmes under the MDGs. In 2014, in a survey¹ sent to twelve NCSDs worldwide – regarding the transition from MDGs to SDGs and the role of the Councils therein – the Armenian Council’s responses mostly indicated support for the SDGs focused on cities, and the need for wider public awareness.

In March 2015, the Prime Minister signed a decree to create the National Council for Sustainable Development Goals. Two years later, an inter-ministerial Council was formed, to lead the efforts in nationalizing the targets and indicators within the 2030 Agenda. Previously, the country had significantly improved the MDG² indicators connected to maternal and child mortality, access to education and sources of drinking water, and partially achieved its goals of reducing poverty and ensuring environmental sustainability.

Realistically, no substantial progress had been made in localizing the SDGs until 2020, when after a new decree, a Council for Sustainable Development Goals was formed once more. The Council was composed of representatives from sectoral ministries (through Deputy Ministers) and was set up to involve NGOs.

The monitoring entities – the National Statistical Service, the Ministry of Territorial Administration and Infrastructure, the Urban Development Committee,

տեղայնացման հետ կապված ոչ մի էական առաջընթաց չի եղել, մինչև նոր որոշմամբ ևս մեկ անգամ ձևավորվեց Կայուն զարգացման նպատակների խորհուրդը: Խորհուրդը կազմված է ոլորտային նախարարությունների ներկայացուցիչներից (փոխնախարարների մակարդակով), և պետք է ներգրավեր քաղաքացիական հասարակության կազմակերպություններին:

Մշտադիտարկում իրականացնող սուբյեկտները՝ Ազգային վիճակագրական ծառայությունը (հիմա Կոմիտեն), Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, Քաղաքաշինության կոմիտեն, Արտաքին գործերի նախարարությունը, առաջնորդվում են ՄԱԿ-ի հայաստանյան թիմի՝ տվյալների հավաքագրման, հաշվարկման և զեկուցման մեթոդոլոգիաներով:

Համաձայնեցում ազգային ռազմավարություններին

Համաձայն Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների Ազգային մակարդակով սահմանված գործողությունների՝ կառավարությունը պարտավորվել է մշակել կլիմայի մեղմման և հարմարվողականության գործողությունների ծրագրեր, որոնք կիրականացվեն տարածքային և ոլորտային իշխանությունների կողմից: Մշակման փուլում գտնվող այս գործողությունների ծրագրերից յուրաքանչյուրը պետք է թարմացվի հինգ տարին մեկ և լինի համաձայնեցված ԿՉՆ-ներին:

2020 թվականին կառավարությունը ներկայացրեց Հայաստանի 2020-2050 թվականների վերափոխման ռազմավարությունը՝ 16 մեզանպատակներով: Մեզանպատակների շրջանակներում գործողությունները համաձայնեցված են տասնվեց ԿՉՆ-ներին (բացի ԿՉՆ 14-ից՝ հաշվի առնելով, որ երկիրը ցամաքով է շրջապատված): Մեզանպատակները

the Ministry of Foreign Affairs – are guided by the UN country team on methodologies for collecting, computing and reporting the data.

Alignment with national strategies

In line with the country’s first Nationally Determined Contributions (NDC) under the Paris Agreement, the government pledged to develop action plans for climate mitigation and adaptation for 2021-2030, to be implemented by subnational and sectoral authorities. The action plans, now in development, will each have a life cycle of five years and are to be aligned with the SDGs.

In 2020, the government inaugurated Armenia’s Transformation Strategy 2020-2050, stipulating sixteen mega goals. The actions within the mega goals are coordinated with the sixteen SDGs (apart from SGD 14, in view of the country’s landlocked geography). Four of the mega goals incorporate targets and indicators from SDG 11.

As a goal dedicated to cities and communities, SDG 11 indicates local resilience, which ultimately defines the capacity to achieve the other development goals. The crucial role of local authorities in achieving “democratic, social and economic sustainability”³ was further emphasized in the session of March 22, 2023, held by the Congress of Local and Regional Authorities. In their address, the Congress called upon national governments to further their efforts in localizing the sustainable development goals. It was recognized that larger funding and capacitating initiatives would become necessary, particularly in light of the ongoing conflicts significantly slowing down progress in Ukraine, Armenia and Azerbaijan.

In response, the Ministry of Territorial Administration and Infrastructure of the Republic of Armenia, with the support of the GIZ, has launched a series of capacitating programmes.⁴ These include training sessions

տակներից չորսը ներառում են ԿՁՆ 11-ի թի-
րախնները և ցուցանիշները:

Որպես քաղաքներին և համայնքներին ուղղված
նպատակ՝ ԿՁՆ 11-ը արտացոլում է տեղային դի-
մակայունությունը, որն էլ, ի վերջո, սահմանում
է զարգացման մյուս նպատակներին հասնելու
կարողությունները: «Ժողովրդավարական, սոցիա-
լական և տնտեսական կայունության»³ հասնելու
գործում տեղական իշխանությունների վճռորոշ
դերը ավելի ընդգծվեց Տեղական և տարածքային
իշխանությունների կոնգրեսի 2023 թվականի
մարտի 22-ի նիստում: Կոնգրեսը ազգային
իշխանություններին կոչ արեց շարունակել կայուն
զարգացման նպատակների տեղայնացմանն
ուղղված իրենց ջանքերը: Վերջինս հաստատեց,
որ ավելի մեծ ֆինանսավորում և հզորացնող նա-
խաձեռնություններ կպահանջվեն՝ հատկապես
հաշվի առնելով ընթացող հակամարտությունները,
որոնք զգալիորեն դանդաղեցնում են առաջընթացը
Ուկրաինայում, Հայաստանում և Ադրբեջանում:

Ի պատասխան՝ ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարությունը GIZ-ի
աջակցությամբ մեկնարկել է հզորացնող ծրագրերի
շարք:⁴ Դրանք ներառում են վերապատրաստման
դասընթացներ և առաջարկություններ՝
օգնելու համայնքային և տարածաշրջանային
իշխանություններին՝ ներառելու ԿՁՆ-ները իրենց
տեղական զարգացման ռազմավարություններում,
ինչպես նաև տեղական կայուն զարգացմանն
ուղղված փոքր և միջին ծրագրերի ֆինանսավորման
համար առաջարկների կոչ (շարունակական):

Ֆինանսավորում

2022 թվականին Հայաստանում ԿՁՆ-ների
զարգացման համար գործընկերների կողմից մոտ
49.3 մլն ԱՄՆ դոլար է տրամադրվել: Տարեկան
բյուջեի գրեթե 2-3%-ը հատկացվում է ԿՁՆ 11-ին:
Մասնավորապես՝ սույն ԿՁՆ-ի ֆինանսավորման

and recommendations to assist municipal and regional
authorities to incorporate SDGs into their local devel-
opment strategies, and a call (ongoing) for proposals
for funding small and medium-sized projects for local
sustainable development.

Funding

In 2022, around \$49.3 million was made available by
the contributing partners towards the advancement of
SDGs in Armenia. Nearly 2-3% of the yearly budget is
being allocated to SDG 11. Most of the funding for this
particular SDG comes from the EU. As for the imple-
menting partners, relatively larger portions are shared
out between the local governments and NGOs, followed
by several ministries (the Ministry of Economy, the
Ministry of Territorial Administration and Infrastructure,
the Ministry of Environment, the Ministry of Labour
and Social Affairs) and UN organizations (UNDP, The
Food and Agriculture Organization, UNICEF).

հիմնական աղբյուրը ԵՄ-ն է: Ինչ վերաբերում է իրականացնող գործընկերներին՝ համեմատաբար ավելի մեծ չափաբաժինները տրամադրվում են տեղական ինքնակառավարման մարմիններին և ԹՀԿ-ներին, այնուհետև մի քանի նախարարությունների (Էկոնոմիկայի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, Շրջակա միջավայրի, Աշխատանքի և սոցիալական հարցերի) և ՄԱԿ-ի կազմակերպություններին (ՄԱԶԾ, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն, ՅՈՒՆԻՍԵՖ):


Աղյուսակ 1. Հայաստանում ներդրում իրականացնող 20 լավագույն գործընկերները

Աղբյուր՝ ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի պաշտոնական կայք՝ <https://armenia.un.org/en/sdgs>



Table 1: Top 20 contributing and implementing partners in Armenia

Source: UNDP Armenia Official website, <https://armenia.un.org/en/sdgs>



Տվյալների աղբյուրներ

Սույն զեկույցը պատրաստելիս՝ գրավոր հարցումներ են կատարվել համապատասխան թիրախների և ցուցանիշների վերաբերյալ տվյալներ հավաքող և մշտադիտարկում իրականացնող մարմիններին,

Data sources

In preparing this report, written inquiries were made to the authorities collecting and monitoring the data on respective targets and indicators, and one NGO, with respect to the indicator 11.7.2. As evidenced by

ինչպես նաև ԹՀԿ-ների հետ՝ 11.7.2 ցուցանիշի վերաբերյալ: Ինչպես վկայում է 2020 թվականի Ազգային կամավոր երկրորդ զեկուլցը՝ տվյալների հավաքագրումը ամենամեծ մարտահրավերն է: Տվյալները հավաքագրման տարբեր կամ (նախկինում) բացակայող մեթոդաբանությունների պատճառով հաճախ իրարամերժ են:

Դեռևս բոլոր կողմերի միջև առկա է վատ համակարգվածություն, ինչի հետևանքով իրազեկվածության պակաս կա ինչպես հանրային, այնպես էլ ինստիտուցիոնալ մակարդակներում, և ցուցանիշները պատշաճ կերպով չեն զեկուլցվում: Չնայած գոյություն ունեցող լավ մշակված պլատֆորմին⁵ (գտնվում է Վիճակագրական կոմիտեի կայքում), որը ԿՁՆ առաջընթացի վերաբերյալ տեղեկատվության առաջին աղբյուրը պետք է լինի, հաճախ անհամապատասխանություն է լինում տարբեր էջերում բերված տվյալների և սահմանումների միջև (պլատֆորմում առկա և ըստ պահանջի համապատասխան իշխանությունների կողմից տրամադրված):

Ամփոփում

Ընդհանուր առմամբ, երկիրը բնութագրվում է եապես անհավասար տարածական զարգացմամբ, որտեղ ռեսուրսների մեծ մասը կենտրոնացված է Երևանում (բնակչության մոտ 37%-ը, ՀՆԱ-ի՝ 60%-ը, շինարարության՝ 58%-ը, ծառայությունների՝ 87%-ը):⁶ Տեղական ինքնակառավարման մարմինները և համայնքները չունեն փորձառություն և ֆինանսական ռեսուրսներ՝ դիմակայունությունը ամրապնդելու համար, որն էլ ավելի է սրվում գյուղերից քաղաք արտահոսքի և արտագաղթի պատճառով:

2022 թվականի դրությամբ⁷ բարելավվել են հետնախորշերում ապրող քաղաքային բնակչության և մաքուր խմելու ջրի հասանելիության ցուցանիշները, մինչդեռ հասարա-

the second National Voluntary Review report of 2020, data collection presents the biggest challenge. The data timeline is often inconsistent, due to differing or (previously) missing methodologies.

There is still poor coordination between all actors, resulting in a lack of awareness both at the public and institutional level, and the indicators not being duly reported. Despite the well-designed platform⁵ in place (housed on the website of the Statistical Committee), which should be the first-line source for information on SDG progress, there is often misalignment between data cited on different pages and definitions (the ones found on the platform versus the ones provided by respective authorities at request).

Summary

Overall, the country is characterized by significantly uneven spatial development, with most resources concentrated in Yerevan (about 37% of the population, 60% of GDP, 58% of construction, 87% of services).⁶ Local municipalities and communities are lacking expertise and financial resources to build resilience, which is further exacerbated by rural-urban and out-migration.

As of 2022,⁷ improvements have been made with regard to indicators on the urban population living in slums and access to piped water, whereas there has been a downward trend with regard to satisfaction with public transport.

Between 2020-2021,⁸ Armenia had the highest increase in the rate (241.6%) of housing construction, mainly in the Yerevan metropolitan/agglomeration area, among all countries of the Eurasian Economic Union. The trend is worrying and potentially dangerous, given the absence of long-term spatial planning strategies (both at national and municipal levels) and disregard for all aspects of sustainability.

կական տրանսպորտի գոհունակության նվազման միտում կա:

2020-2021⁸ թվականներին Հայաստանը Եվրասիական տնտեսական միության բոլոր երկրների շարքում բնակարանաշինության ամենաբարձր ցուցանիշն է ունեցել (241,6%), մասնավորապես՝ Երևանի քաղաքային/ազլումերացիոն շրջանում: Սա մտահոգիչ և պոտենցիալ վտանգավոր միտում է՝ հաշվի առնելով երկարաժամկետ տարածքային պլանավորման ռազմավարությունների բացակայությունը (ինչպես ազգային, այնպես էլ քաղաքային մակարդակով) և կայունության բոլոր ասպեկտների անտեսումը:

1 Cornforth, Jack and Becuwe, Juliette. "What Role Can National Sustainable Development Councils and Similar Bodies Play in the Design and Delivery of the Sustainable Development Goals?" [Թորնֆորթ, Ջեյք և Բիքուե, Ջուլիետթ «Ի՞նչ դեր կարող են ունենալ Կայուն զարգացման ազգային խորհուրդները և նմանատիպ մարմինները կայուն զարգացման նպատակների նախագծման և իրականացման գործում»] Շահագրգիռ կողմերի ֆորում, 2024, https://www.iisd.org/system/files/publications/sd-plannet_ncds.pdf (Դիտված 2023 թ. մայիսի 5):

2 «Հազարամյակի զարգացման նպատակներ՝ առաջընթացի ազգային զեկույց, Հայաստան, 2015 թ.»: ՏԿԵՆ, https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/MDG%20armenian.pdf (Դիտված 2023 թ. մայիսի 5):

3 "Localizing the sustainable development goals – a priority for the Congress." [«Կայուն զարգացման նպատակների տեղայնացումը Կոնգրեսի համար առաջնահերթություն է»] ԵՆ տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես, 2023 թ. մարտի 31, <https://www.coe.int/en/web/congress/-/localising-the-sustainable-development-goals-a-priority-for-the-congress-1> (Դիտված 2023 թ. մայիսի 5):

4 «Մեկնարկել է համայնքներում 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացման նախաձեռնությունը», ՏԿԵՆ, 2023 թվականի ապրիլի 13: <https://mtad.am/news/1405> (Դիտված 2023 թ. մայիսի 5):

5 «Կայուն զարգացման նպատակների համար Հայաստանի վերաբերյալ տվյալներ», Վիճակագրության կոմիտե, <https://sdg.armstat.am/am/goals/> (Դիտված 2023 թ. մայիսի 5):

6 «Հայաստանը թվերով», Վիճակագրության կոմիտե, 2022, <https://armstat.am/am/?nid=82&id=2524>

7 "From Crisis to Sustainable Development: the SDGs as Roadmap to 2030 and Beyond." [«Ճգնաժամից մինչև կայուն զարգացում. ԿՉԼ-ները որպես ճանապարհային քարտեզ դեպի 2030 թվականը և դրանից հետո»] ԿՉԼ զեկույց, 2022, Հայաստան <https://dashboards.sdgindex.org/static/profiles/pdfs/SDR-2022-armenia.pdf> (Դիտված 2023 թ. մայիսի 5):

8 "Об основных социально-экономических показателях Евразийского экономического союза: Январь – июнь 2021 года." [«Եվրասիական տնտեսական միության առաջնային սոցիալ-տնտեսական ցուցանիշները. հունվար-հունիս 2021թ.»] ԵՏՀ http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/econstat/Documents/Analytics/indicators2021_06.pdf (Դիտված 2023 թ. մայիսի 5):

1 Cornforth, Jack and Becuwe, Juliette. "What Role Can National Sustainable Development Councils and Similar Bodies Play in the Design and Delivery of the Sustainable Development Goals?" Stakeholder Forum. 2014, https://www.iisd.org/system/files/publications/sdplannet_ncds.pdf (Accessed 5 May 2023).

2 "Millennium development goals: national progress report – Armenia 2015." Ministry Of Territorial Administration and Infrastructure, https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/MDG%20english.pdf (Accessed 5 May 2023).

3 "Localizing the sustainable development goals – a priority for the Congress." Congress of Local and Regional Authorities, 31 March 2023, <https://www.coe.int/en/web/congress/-/localising-the-sustainable-development-goals-a-priority-for-the-congress-1> (Accessed 5 May 2023).

4 "Մեկնարկել է համայնքներում 2030 օրակարգի եւ կայուն զարգացման նպատակների տեղայնացման նախաձեռնությունը." [The initiative of localizing the 2030 agenda and sustainable development goals in communities has started]. Ministry Of Territorial Administration and Infrastructure, 13 April 2023, <https://mtad.am/news/1405> (Accessed 5 May 2023).

5 "Armenia data for the Sustainable Development Goals." Armstat, <https://sdg.armstat.am/goals/> (Accessed 5 May 2023).

6 Armenia in figures, 2022. Armstat, <https://armstat.am/en/?nid=82&id=2524> (Accessed 5 May 2023).

7 "From Crisis to Sustainable Development: the SDGs as Roadmap to 2030 and Beyond." Sustainable Development Report 2022, Armenia, <https://dashboards.sdgindex.org/static/profiles/pdfs/SDR-2022-armenia.pdf> (Accessed 5 May 2023).

8 "Об основных социально-экономических показателях Евразийского экономического союза: Январь – июнь 2021 года." [The primary socio-economic indicators of the Eurasian Economic Union: January - June 2021]. Eurasian Economic Commission, http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/econstat/Documents/Analytics/indicators2021_06.pdf (Accessed 5 May 2023).



Մատչելի բնակարանային տնտեսություն

Հայաստանում բնակարանային ֆոնդի մեծ մասը կազմում են խորհրդային ժամանակաշրջանի բազմաբնակարան շենքերը, որոնց մոտ 75%-ը¹ կառուցվել է 1950-1990 թվականներին: 1991 թվականին սկսված մասնավորեցման գործընթացներից ի վեր Հայաստանն այժմ ունի մոտ 96%² սեփականաշնորհված տներ:

1988 թվականի երկրաշարժը մեծ վնաս հասցրեց քաղաքային բնակելի տներին (տուժել է բնակարանային ֆոնդի մոտ 17%-ը), իսկ հետևանքները 35 տարի անց դեռ ակնհայտ են: Դեռևս կան վնասվածության 3-րդ և 4-րդ աստիճանի (վթարային եվ խարխուլ) 614 շինություններ, որոնք բնակեցված են, չնայած նրան, որ 4-րդ աստիճանի շենքերը ենթակա են քանդման: Մոտավոր հաշվարկներով կան ևս 1'200 անհատական բնակելի տներ, որոնք ունեն 4-րդ աստիճանի վնասվածություն:

2010-ական թվականների սկզբին գործարկվեցին մի քանի մատչելի բնակարանային/ հիփոթեքային քաղաքականություններ, որոնք նախատեսված էին ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների համար: Հետագայում այս քաղաքականությունները տարածվեցին ավելի մեծ խմբերի վրա՝ խթանելով առաջարկը՝ հաշվի չառնելով իրական պահանջարկը և հանգեցնելով մատչելի, սպեկուլյատիվ բնակարանային շուկայի:



Թիրախ 11.1

Մինչև 2030 թ. բոլորի համար հասանելի դարձնել պաղշած, անվտանգ և մաքուր բնակարաններ և հիմնական ծառայություններ, արդիականացնել ետնախորշերը

Conventional Housing for All

Most of the housing stock in Armenia is made up of Soviet-era multi-apartment buildings, with around 75%¹ constructed between 1950 and 1990. Coming out of the privatization launched in 1991, Armenia now boasts an owner-occupancy rate of nearly 96%.²



Target 11.1

By 2030, ensure access for all to adequate, safe and affordable housing and basic services and upgrade slums.

The earthquake of 1988 caused extensive damage to the dwellings across most urban areas (around 17% of the housing stock was affected), with the repercussions still evident 35 years on. There are still 614 dangerous buildings classified as critically damaged (3rd and 4th degrees) that are inhabited, despite those of 4th degree being subject to demolition. It is estimated that there are an additional 1200 single-family houses showing 4th degree damage.

Several affordable housing/mortgage policies catering to lower-income households were put in place in the early 2010s. These policies were later extended to larger groups, boosting supply without regard for true demand, and leading to an unaffordable, speculative housing market.

ՑՈՒՑԱՆԻՇ 11.1.1

Համընդհանուր ցուցանիշ.

ետնախորշերում, ոչ ֆորմալ բնակավայրերում կամ անբավարար բնակարանային պայմաններում ապրող քաղաքային բնակչության համամասնությունը

Ազգային ցուցանիշ. խարխուլ և վթարային բնակարանային պայմաններում ապրող քաղաքային բնակչության համամասնությունը

Աղյուսակ 2. Քաղաքային տնային տնտեսությունների մասը, որոնց բնակելի միավորներն են՝ քոթեջ/ժամանակավոր կացարան, համատեղ բնակության կացարան, հանրակացարան, այլ բնակելի միավոր, կամ մարդիկ, ովքեր անօթևան են ՄԻԱՎՈՐ

	2015	2016
100,000 բնակչի հաշվով	1,7	1,7

Աղբյուր՝ Ազգային վիճակագրական կոմիտե, մարդահամար

«Ոչ ֆորմալ» բնակարանների վերաբերյալ ազգայնորեն ընդունված սահմանումը իր մեջ ներառում է հետերկրաշարժյան աղետի գոտիներում կառուցված ժամանակավոր կացարանները: Այս տեսակի շուրջ 7'000 կառույցներ կան, որոնք այժմ ունեն քայքայվածության տարբեր աստիճաններ, և որոնց 78%-ը գտնվում է քաղաքային բնակավայրերում՝ կացարան հանդիսանալով շուրջ 25'000 մարդու համար: Վերջիններս հիմնականում սոցիալապես անապահով տնային տնտեսություններն են, գերբնակեցված և քաղաքային համապատասխան ենթակառուցվածքների սահմանափակ հասանելիությամբ: Այդ կառույցների մեծ մասը գտնվում է Գյումրի (2'800), Սպիտակ (1'300), Վանաձոր (650) քաղաքներում:

Հաշվի առնելով ուժեղ սեյսմիկ իրադարձության կրկնման հավանականությունը և ավելի ցածր մագնիտուդով երկրաշարժերի համար մինչև 1990 թվականի նորմերի պահանջները՝ բազմաբնա-

INDICATOR 11.1.1

Global indicator: Proportion of urban population living in slums, informal settlements or inadequate housing

National indicator: Proportion of urban households whose dwelling units are: Cottage/temporary shelter, dwelling of joint residence, dormitory, other dwelling unit or who are homeless

Table 2: Proportion of urban households whose dwelling units are: Cottage/temporary shelter, dwelling of joint residence, Dormitory, other dwelling unit or who are homeless

UNIT	2015	2016
per 100,000 population	1.7	1.7

Source: National Statistical Committee, Population Census

The nationally adapted definition for 'informal' housing constitutes temporary shelters, built in the post-earthquake disaster areas. There are nearly 7000 structures of this kind, at various degrees of dilapidation – 78% of which are in urban areas – housing nearly 25,000 people. These are, predominantly, households in the lowest-income bracket, overcrowded and with limited access to adequate urban infrastructure. Most of these structures are located in the cities of Gyumri (2800), Spitak (1300), and Vanadzor (650).

In view of the likelihood of another seismic event, along with the pre-1990 regulations for earthquakes of lower magnitudes, around 60% of multi-apartment buildings face elevated vulnerability. Additionally, unauthorized construction (which is hard to quantify) adds to the informality.

Currently, the term 'slum' is not being applied to any typology of shelters. In certain areas, where the characteristics of slums do exist (as defined in the

կարան շենքերի մոտ 60%-ը ունի բարձր խոցելիություն: Բացի այդ, չարտոնված՝ ինքնակամ շինարարությունը, որը դժվար է քանակականացնել, ստեղծում է լրացուցիչ «ոչ ֆորմալության» դրսևորումներ:

Ներկայումս ապաստանների ոչ մի տեսակի համար չի կիրառվում «ետնախորշ» տերմինը: Որոշ տարածքներում, որտեղ առկա են «ետնախորշերին» հատուկ հատկանիշներ (ինչպես սահմանված է UN-Habitat-ի կողմից տրամադրված մեթատվյալներում³), իմաստաբանությունը բարդանում է՝ պայմանավորված առկա պատմական համատեքստով:

reference metadata³ provided by UN-Habitat), this is complicated by the historical context.

1 Ինքնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 2021թ. վիճակագրական կոմիտե, https://armstat.am/file/article/housing_stock_2021_1_am.pdf (Դիտված 2023 թ. մայիսի 5):

2 "Habitat III national report, Armenia." [«Հաբիտատ III» Ազգային զեկույց, Հայաստան»] ՄԱԿ-ի բնակարանային շինարարության և քաղաքաշինության կայուն զարգացման համաժողով (ՉԱԲ-ՏՍՏ-III), 2016, <https://habitat3.org/wp-content/uploads/Armenia-National-Report.pdf> (Դիտված 2023 թ. մայիսի 5):

3 "SDG indicator metadata (Harmonized metadata template - format version 1.1)." [«Մեթատվյալներ ըստ ԿՁՆ ցուցանիշների (Մեթատվյալների ներդաշնակ ցուցանիշ՝ ձևանմուշի տարբերակ 1.1)»]: ՄԱԿ-ի վիճակագրության բաժին, դեկտեմբեր 20, 2021 <https://unstats.un.org/sdgs/metadata/files/Metadata-11-01-01.pdf> (Դիտված 2023 թ. մայիսի 5):

1 Ինքնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 2021թ. [Housing Stock and Communal Economy in the Republic of Armenia For 2021]. Armstat, https://armstat.am/file/article/housing_stock_2021_1_am.pdf (Accessed 5 May 2023).

2 "Habitat III national report, Armenia." Habitat III, the United Nations Conference on Housing and Sustainable Urban Development, 2016, <https://habitat3.org/wp-content/uploads/Armenia-National-Report.pdf> (Accessed 5 May 2023).

3 "SDG indicator metadata (Harmonized metadata template - format version 1.1)." United Nations Statistics Division, 20 Dec 2021, <https://unstats.un.org/sdgs/metadata/files/Metadata-11-01-01.pdf> (Accessed 5 May 2023).



Անվտանգ և արդար շարժունակություն

Հայաստանի ճանապարհային ցանցը խորհրդային ժամանակաշրջանից ժառանգված համակարգն է: Վերջին երեք տասնամյակների ընթացքում չնայած ճանապարհային համակարգի ընդլայնման բազմաթիվ ծրագրեր են եղել, հիմնական շեշտը դրվել է համակարգի պահպանման և կատարելագործման վրա:

Իրանի հետ հարավային և Վրաստանի հետ հյուսիսային սահմանները կապող հյուսիս-հարավ ավտոմայրուղին, որի շինարարական աշխատանքները մեկնարկել են 2009 թվականին, ավարտված է 25%-ով: Եվս 25%-ը գտնվում է նախագծման և կառուցման փուլում: Որպես ամենամեծ ենթակառուցվածք՝ դրա դանդաղ իրականացումը և վատ որակը շարունակում են մնալ ճանապարհային ցանցի հիմնական մարտահրավերները:¹ Թեև միջազգային դոնորների և բանկի կողմից ֆինանսավորվող այս ճանապարհը համապատասխանում է անվտանգության և շրջակա միջավայրի վրա ազդեցության համեմատաբար բարձր նախագծային ստանդարտների, այն չի նպաստել Հայաստանի այլ ճանապարհների պահպանմանն ու բարեկարգմանը: Հայաստանի բարդ (կտրտված) տեղանքով պայմանավորված վտանգավոր նախագծային լուծումները, ցուցանակների վատ համակարգը, ճանապարհների երկայնքով ընթացող անվերահսկելի շինարարական աշխատանքները և ոչ պատշաճ սպասարկումը միջհամայնքային ճանապարհային ցանցի հիմնական մարտահրավերներն են: Նույն մարտահրավերները վերաբերում են նաև ներհամայնքային ճանապարհներին, որտեղ երթևեկության կառավարումը և շարժական այլ միջոցների հետ հատումը բարդացնում է իրավիճակը: Լուսացույցների կառավարումը հիմնված



Թիրախ 11.2.
Մինչև 2030 թվականը բոլորի համար ապահովել անվտանգ, մաքուր, հասանելի և կայուն տրանսպորտային համակարգեր՝ բարելավելով ճանապարհային անվտանգությունը՝ հատկապես ընդլայնելով հասարակական տրանսպորտը՝ հաշվառելով ուշադրություն դարձնելով խոցելի խմբերի, կանանց, երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների կարիքներին:

Safe and Fair Mobility

Armenia's road network system is the system inherited from the Soviet period. During the last three decades, although there have been many plans for an expansion of the road system, the main focus has been on the maintenance and improvement of the system.

The North-South highway linking the southern border with Iran and the northern border with Georgia, initiated in 2009, is 25% complete. Another 25% is under the design-build process. As the largest infrastructure project, its slow realization and poor quality remain the main challenges of the road system network.¹ Although this road, financed by international donors and the bank, has a relatively high design standard in terms of safety and environmental impact, it has not supported the maintenance and improvement of other roads in Armenia. Dangerous design solutions caused by the hard terrain of Armenia, the poor signage system, uncontrolled build activities along the roads and inadequate maintenance are the main challenges of the inter-settlement road network. The same challenges apply to intra-settlement roads, where traffic management and the intersection with other means of mobility renders the situation more difficult. Traffic light control is mainly based on vehicle movement without considering the phasing and timing of pedestrian movements. There are no dedicated lanes or streets for active mobility (bicycles, scooters, etc.), and the combined movement does not consider or regulate other types of transport. It should be noted that the whole policy of road design and traffic organization needs to be reconsidered, starting from design, construction, and administration to public awareness.

Public transportation is available in 20 of 59 urban settlements and about 900 rural settlements.² Only Yerevan has electric trolley buses (56 vehicles) and



Target 11.2.
By 2030, provide access to safe, affordable, accessible and sustainable transport systems for all, improving road safety, notably by expanding public transport, with special attention to the needs of those in vulnerable situations, women, children, persons with disabilities and older persons.

Է տրանսպորտային հոսքերի վրա՝ հաշվի չառնելով հետիոտնի տեղաշարժի փուլավորումը և տևողությունը: Ակտիվ տեղաշարժի համար հատուկ գոտիներ կամ փողոցներ չկան (հեծանիվներ, մոտոբասայակներ և այլն), իսկ համակցված տեղաշարժը չի դիտարկում և կարգավորում տեղաշարժի այլ տեսակներ: Չարկ է նշել, որ ճանապարհների նախագծման և երթևեկության կազմակերպման ողջ քաղաքականությունը վերանայման կարիք ունի՝ սկսած նախագծումից, շինարարությունից, վարչարարությունից մինչև հանրային իրազեկում:

Հասարակական տրանսպորտը 59 քաղաքային և մոտ 900 գյուղական բնակավայրերից² հասանելի է 20-ում: Միայն Երևանում կան էլեկտրական տրոլեյբուսներ (56 մեքենա) և մետրո (10 կայարան և 32 մեքենա), որոնցից օգտվում են երթևեկողների³ 15%-ը:

Ուղևորների թվի վերաբերյալ միակ հասանելի տվյալները վերաբերում են Երևանին, և վերջինս ցույց է տալիս, որ երթևեկողների թիվը նվազում է, քանի որ հասարակական տրանսպորտի որակը վատթարացել է, և մարդիկ նախընտրում են օգտվել մասնավոր մեքենաներից: Մինչև 2021 թվականը Երևանում⁴ գրանցված էր մոտ 200 հազար մեքենա, իսկ 2019-2022 թվականներին Հայաստանում⁵ գրանցված էր մոտ 160 հազար մեքենա⁶:

a metro (10 stations and 32 vehicles), covering 15% of commuters.³

The only available data on the number of commuters is available for Yerevan, and it shows below that the number of commuters is reduced as the quality of public transport worsens, and people prefer to use private cars. By 2021, around 200,000 cars were registered in Yerevan,⁴ and between 2019-2022 around 160,000 cars⁵ were registered in Armenia.⁶

Աղյուսակ 3. Երևանում հասարակական տրանսպորտի տարեկան ուղևորների համեմատությունը

ՓՈՒՆԱԴՐԱՄԻՋՈՑԻ ՏԵՍԱԿԸ	2014	2021	2022
Ավտոբուս	63,397,818	70,500,000	74,100,000
Միկրոավտոբուս (առավելագույնը 20 մարդ)	104,559,700	28,700,000	44,200,000
Տրոլեյբուս		400,900	4,397,500
Մետրո	13,108,000	18,573,000	23,317,000
Ընդհանուր ուղևորներ	181,067,532	118,175,921	146,016,522
Աճ		-35%	24%
Էլեկտրական փոխադրամիջոց օգտագործող ուղևորների ընդհանուր թիվը	13,108,000	18,973,900	27,714,500
Աճ		45%	46%

Աղբյուր՝ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայք և Breavis ընկերության ուսումնասիրություն (Նախկին IPSC), <https://www.yerevan.am/hy/transport-department/>

2014-2021 թվականներին ուղևորների ընդհանուր թվի կրճատումը պայմանավորված է ընդհանուր տրանսպորտային համակարգի վատթարացմամբ, որը հիմնականում իրականացվում էր միկրոավտոբուսներով:

Տարբեր գերատեսչություններին ուղղված հարցումների արդյունքում երթևեկության վերաբերյալ տվյալներ են ստացվել 59 քաղաքային բնակավայրերից 11-ի համար (Երևան, Սևան, Սպիտակ, Հրազդան, Եղվարդ, Գորիս, Կապան, Աշտարակ, Գյումրի, Վայք, Ջերմուկ), որոնց հիման վրա էլ հաշվարկվել են ցուցանիշները:

Table 3: Comparison of annual public transport commuters in Yerevan

TRANSPORTATION TYPE	2014	2021	2022
Bus	63,397,818	70,500,000	74,100,000
Minibus (max. 20 pp)	104,559,700	28,700,000	44,200,000
Trolleybus		400,900	4,397,500
Metro	13,108,000	18,573,000	23,317,000
Total Commuters	181,067,532	118,175,921	146,016,522
Growth		-35%	24%
Total Commuters with Electric Transport	13,108,000	18,973,900	27,714,500
Growth		45%	46%

Source: Yerevan Municipality Official Website and Breavis (former IPSC) Study, <https://www.yerevan.am/hy/transport-department/>

The reduction in the total numbers of commuters between 2014 and 2021 was due to the worsening of the overall transportation organization, which was mainly based on minibuses.

Based on requests from different agencies, commuter data was provided for 11 out of 59 urban settlements (Yerevan, Sevan, Spitak, Hrazdan, Yeghvard, Goris, Kapan, Ashtarak, Gyumri, Vayk, and Jermuk), on the basis of which the indicator was calculated on a sample basis.

ՑՈՒՑԱՆԻՇ 11.2.1

Համընդհանուր ցուցանիշ՝ բնակչության համամասնությունը, որը ունի հասարակական տրանսպորտի հարմարավետ հասանելիություն՝ ըստ սեռի, տարիքի և հաշմանդամության:

Քանի որ միակ հասանելի տվյալը օրական կամ տարեկան ուղևորների թիվն է՝ առանց սեռի, տարիքի և հաշմանդամություն ունեցող անձանց ստույգ տարանջատման, ունենք ստորև բերված պատկերը՝

Աղյուսակ 4. հասարակական տրանսպորտից օգտվող օրական ուղևորներ

ՔԱՂԱՔ	ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ	ՏԱՐԵԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՆԵՐ	ՕՐԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՆԵՐ	
Երևան	1,084,000	146,016,522	400,045	36.9 %
Գյումրի	112,400	626,862	1,717	1.5 %
Կապան	42,300	1,377,000	3,773	8.9 %
Հրազդան	40,000	108,000	296	0.7 %
Գորիս	20,400	460,000	1,260	6.2 %
Սևան	19,000	43,800	120	0.6 %
Աշտարակ	16,800	260,000	712	4.2 %
Սպիտակ	12,700	127,750	350	2.8 %
Եղվարդ	11,900	33,125	125	1.1 %
Վայք	5,600	7,210	20	0.4 %
Ջերմուկ	4,100	49,060	134	3.3 %

Աղբյուր՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայք

INDICATOR 11.2.1

Global indicator: Proportion of population that has convenient access to public transport, by sex, age and persons with disabilities.

As the only data was the number of daily or annual commuters, without an exact breakdown of sex, age and persons with disabilities, we have the overview included below:

Table 4. The daily commuters on public transport

CITY	POPULATION	ANNUAL COMMUTERS	DAILY COMMUTERS	
Yerevan	1,084,000	146,016,522	400,045	36.9 %
Gyumri	112,400	626,862	1,717	1.5 %
Kapan	42,300	1,377,000	3,773	8.9 %
Hrazdan	40,000	108,000	296	0.7 %
Goris	20,400	460,000	1,260	6.2 %
Sevan	19,000	43,800	120	0.6 %
Ashtarak	16,800	260,000	712	4.2 %
Spitak	12,700	127,750	350	2.8 %
Yeghvard	11,900	33,125	125	1.1 %
Vayk	5,600	7,210	20	0.4 %
Jermuk	4,100	49,060	134	3.3 %

Source: Ministry of Territorial Administration and Infrastructure, Yerevan Municipality Official Website

1 Աստղիկ Գևորգյան՝ «Մեկուսացնելով Չայաստանը. Զյուսիս-հարավ տրանսպորտային և էներգետիկ ծրագրեր», Ամիոփի մեդիա, 2017 թ. հունվարի 9, <https://ampop.am/north-south-transport-and-energy-projects/> (Դիտված 2023 թ. մայիսի 5):

2 Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տրամադրված պաշտոնական տվյալներ

3 Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայք՝ <https://www.yerevan.am/hy/transport-department/> (Դիտված 2023 թ. մայիսի 5):

4 Յ. Զալիբեկյան՝ «Ավտոկայանատեղի, հասարակական տրանսպորտ և անձնական պատասխանատվություն»՝ Alt_urban հրապարակում, urbanlab, 2021 թվական, https://www.urbanlab.am/file_manager/Alt_urban_research_publication.pdf

5 Չայաստանում գրանցված ավտոմեքենաների քանակը գաղտնի տեղեկատվություն է և հասանելի չէ հանրությանը:

6 «Ավտոմեքենաների թիվը Չայաստանում 2 անգամ աճել է, ճՏՊ-ների թիվը՝ նվազել», Sputnik Արմենիա, 2023 թ. հունվարի 26, <https://armeniasputnik.am/20230126/avtomeqenani-tivy-hajastanum-2-angam-atshel-e-tshtpneri-tivy-nvazel-54342613.html> (Դիտված 2023 թ. մայիսի 5):

1 Աստղիկ Գևորգյան՝ «Մեկուսացնելով Չայաստանը. Զյուսիս-հարավ տրանսպորտային և էներգետիկ ծրագրեր» [Astghik Gevorgyan. "Isolating Armenia. North-South Transport and Energy Projects"], Ampop Media, 9 January 2017, <https://ampop.am/north-south-transport-and-energy-projects/> (Accessed 5 May 2023)

2 Official data from Ministry of Territorial Administration and Infrastructure

3 Yerevan Municipality Official Website, <https://www.yerevan.am/hy/transport-department/> (Accessed 5 May 2023).

4 H. Zalibekyan, "Parking, Public Transport and Personal Responsibility", Alt_urban Publication, urbanlab, 2021, https://www.urbanlab.am/file_manager/Alt_urban_research_publication.pdf

5 «Ավտոմեքենաների թիվը Չայաստանում 2 անգամ աճել է, ճՏՊ-ների թիվը՝ նվազել» ["The number of cars in Armenia has doubled, while the number of accidents has decreased"], Sputnik Armenia, 26 January 2023, <https://armeniasputnik.am/20230126/avtomeqenani-tivy-hajastanum-2-angam-atshel-e-tshtpneri-tivy-nvazel-54342613.html> (Accessed 5 May 2023).

6 The number of cars registered in Armenia is confidential and is not available to the public.



Ներառական պլանավորում

Հայաստանյան պլանավորման համակարգը կրել է խորհրդային պլանավորման համակարգի ուժեղ ազդեցությունը: Անկախության վերջին 30 տարիների ընթացքում տարածական պլանավորման համակարգի անհրաժեշտ հարմարեցումը բաց շուկայական տնտեսությանը և թափանցիկ կառավարմանը՝ լայն իմաստով ձախողվել է: Թեև փորձեր են արվել կիրառել նոր տեսակի քաղաքային պլանավորման փաստաթղթեր, այսինքն՝ գոտևորման նախագծեր, սակայն մինչ այժմ բարձրաստիճան պաշտոնյաներն անգամ բարեփոխումների բացակայության հետ կապված իրենց դժգոհությունն են արտահայտում: Որպես տնտեսական գործունեության հիմնական շարժիչ՝ բարձր կոռուպցիոն ռիսկերով և բնապահպանական կարևորությամբ, քաղաքային զարգացումը դեռևս համարվում է երկրի քաղաքական էլիտայի հիմնական գործիքակազմերից մեկը: Ամենավերջին և ակնհայտ օրինակներից մեկը երեվանում եկամտային հարկի վերադարձի միջոցով անշարժ գույք ձեռք բերելու կառավարության կողմից սուբսիդավորվող ծրագրերն են, որոնք լուրջ մարտահրավեր են դարձել մայրաքաղաքի համար: Վերջերս հայտարարված ցուցանիշներով՝ նշված պետական սուբսիդավորմամբ ֆինանսավորվում են երևանում կառուցվող շուրջ 100'000 բնակարաններից 55'000-ը որոնք կարող են տեղավորել ավելի մեծ թվով բնակիչներ, քան Հայաստանի մեծությամբ 2-րդ և 3-րդ քաղաքների (Գյումրին՝ 120'000 և Վանաձորը՝ 80'000 բնակիչ) ամբողջ բնակչությունը, չնայած վերջին 30 տարում երկրի ժողովրդագրական բացասական միտումներին (նվազում՝ 3.3 մլն-ից՝ 2.9 մլն):



Թիրախ 11.3
Մինչև 2030 թ. խթանել ներառական և կայուն քաղաքայինացումը և մարդկային բնակավայրերի մասնակցային, ինտեգրված և կայուն պլանավորումն ու կառավարումը բոլոր երկրներում:

Inclusive Planning

The Armenian planning system was strongly influenced by the Soviet planning system. During the last 30 years of independence, the necessary adaptation of the spatial planning system to an open market economy and transparent governance in a broader sense has failed. Although there have been some attempts to introduce new types of urban planning documents, i.e. zoning plans, so far even high level officials express their dissatisfaction with the lack of reforms. As one of the main engines of economic activity, with high corruption risks and high environmental importance, urban development activities are still considered one of the main instruments of the country's political elite. One of the most recent and obvious examples is the government-subsidized program of purchasing real estate in Yerevan through an income tax return, which became a serious challenge for capital. It was recently announced that 55,000 apartments will be built in Yerevan, which can house a greater number of residents than the entire population of the 2nd and 3rd largest cities of Armenia (Gyumri with 120,000 and Vanadzor with 80,000 inhabitants). In any case, the demographic growth of the country over the last 30 years has decreased from 3.3 to 2.9 million people.



Target 11.3
By 2030, enhance inclusive and sustainable urbanization and capacity for participatory, integrated and sustainable human settlement planning and management in all countries.

ՑՈՒՑԱՆԻՇ 11.3.1

Համընդհանուր ցուցանիշ` հողերի սպառման մակարդակի հարաբերակցությունը բնակչության աճի տեմպերին:

Տվյալների բացակայությունը հողի օգտագործման գործակիցը հաշվարկելու հիմնական խոչընդոտն է: Հաշվի առնելով առկա տվյալները` առաջարկվել են երկու տարբեր մեթոդաբանություն: Առաջին` ավանդական մեթոդը նոր հողերի դիտարկումն է, որոնց հողօգտագործման նպատակային նշանակությունը փոխվել է ազգային մակարդակով: Այս տվյալները հասանելի են, քանի որ Հայաստանի կառավարությունը յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ին հաստատում է «Հողային հաշվեկշիռը», որն արտացոլում է հողօգտագործման 9 նպատակային նշանակությունները` հիմնված Հողային օրենսգրքի վրա: Այս տվյալները սակայն հաշվի չեն առնում այն հողատարածքները, որոնց նշանակությունը փոխվել է մինչև նշված ժամանակահատվածը:

INDICATOR 11.3.1

Global indicator: Ratio of land consumption rate to population growth rate.

A lack of data is the main challenge for calculating the ratio of land consumption rate to population growth rate (LCRPGR). Given the available data, two different methodologies have been suggested. The first conventional method was to consider the new lands that changed their land use category at the national level. This data is available as the Government of Armenia approves the 'Land Use Balance' on July 1st each year, which reflects the 9 land use categories based on the Land Code of Armenia. This data does not consider land use that changed before the target period.

Աղյուսակ 5. Կառուցապատման և բնակչության աճի ցուցանիշների հարաբերակցությունը

ՏԱՐԻ	ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀՈՂԵՐ (ՀԵԿՏԱՐ)	ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ	LCRPGR
2014	151,800	3,017,100	Կիրառելի չէ
2015	151,800	3,010,600	0
2016	151,800	2,998,600	0
2017	151,900	2,986,100	100
2018	151,900	2,972,700	0
2019	151,900	2,965,300	0
2020	151,940	2,959,700	40
2021	152,320	2,963,300	380

Աղբյուր՝ Կադաստրի կոմիտե, Վիճակագրական կոմիտե

Մյուս մոտեցումը կարող է լինել քաղաքային բնակավայրերի ընտրանքի համար ցուցանիշի հաշվարկը՝ հասանելի տվյալների (Open Street Map կամ արբանյակային պատկերներ) հիման վրա Կառուցապատման նորմալիզացված տարբերության ինդեքսի (Normalized Difference Built-up Index (NDBI)) մեթոդով:

Table 5. The ratio of land consumption rate to population growth rate (LCRPGR)

YEAR	URBAN LANDS (HECTARE)	POPULATION	LCRPGR
2014	151,800	3,017,100	Not Applicable
2015	151,800	3,010,600	0
2016	151,800	2,998,600	0
2017	151,900	2,986,100	100
2018	151,900	2,972,700	0
2019	151,900	2,965,300	0
2020	151,940	2,959,700	40
2021	152,320	2,963,300	380

Source: Cadastre Committee, Statistic Committee

The other approach consists of making this calculation by sampling some urban settlements and using open data (Open Street Map or Satellite Imagery) through the Normalized Difference Built-up Index to try to generalize this data.

Աղյուսակ 6. ընտրված քաղաքների համար կառուցապատման և բնակչության աճի ցուցանիշների հարաբերակցությունը (LCRPGR)
 Table 6. The ratio of land consumption rate to population growth rate for sample cities (LCRPGR)

		ԱԼԱՎԵՐԴԻ	ԱՐԹԻԿ	ԲԵՐԴ	ԳԱՎԱՌ	ԿԱՊԱՆ	ԵՐԵՎԱՆ
		ALAVERDI	ARTIK	BERD	GAVAR	KAPAN	YEREVAN
Հողի սպառման գործակից (ՀՍԳ) Land Consumption Rate (LCR)	2010 - 2015	0.011	0.006	0.005	0.003	0.007	0.005
	2015 - 2020	0.004	0.004	0.003	0.002	0.006	0.004
Բնակչության աճի գործակից (ԲԱԳ) Population Growth Rate (PGR)	2010 - 2015	-0.03	0.02	-0.02	-0.05	-0.01	-0.01
	2015 - 2020	-0.02	-0.01	-0.01	-0.02	0	0
ՀՍԳ / ԲԱԳ LCRPGR	2010 - 2015	-0.38	0.35	-0.3	-0.05	-0.61	-0.61
	2015 - 2020	-0.2	-0.27	-0.37	-0.12	-2.47	1.87
Կառուցապատման տարածք մեկ շնչի հաշվով (քմ) Build-up area Per Capita (sqm)	2010	37.05	78.36	76.51	100.66	15.37	36.94
	2015	45.01	73.99	85.51	131.04	16.95	39.46
	2020	50.23	80.38	90.23	146.53	17.64	39.86
Կառուցապատման տարածքում տոկոսային փոփոխություն Percentage Change in Build-up area	2010 - 2015	0.05	0.03	0.03	0.01	0.04	0.03
	2015 - 2020	0.02	0.02	0.01	0.01	0.03	0.02

Աղբյուր՝ Կադաստրի կոմիտե, Վիճակագրական կոմիտե, GHS-BUILT-S (JHC)
 Source: Cadastre Committee, Statistic Committee, GHS-BUILT-S (JHC)

ՑՈՒՑԱՆԻՇ 11.3.2

Համընդհանուր ցուցանիշ՝ Բաղաքների պլանավորման և կառավարման մեջ քաղաքացիական հասարակության ուղղակի մասնակցության կառուցվածք ունեցող քաղաքների համամասնությունը, որոնք գործում են կանոնավոր և ժողովրդավար ձևով:

